# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<< 22 >> 09 2014 թվականի N: 227 -Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ՄԱՐՏՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԻՈԼԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, 16-րդ հոդվածի 3-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ղազանչիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Մարտուն Խաչատրյանի 2014 թվականի սեպտեմբերի 9-ի և Վիոլետա Շահինյանի 2014 թվականի սեպտեմբերի 12-ի դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ղազանչիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն Մարտուն Խաչատրյանի լիազորությունները:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Ղազանչիի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Վիոլետա Շահինյանին՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրենի ընտրությունը (նշանակումը):
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Սահակ Մինասյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանին՝ սահմանված կարգով կազմակերպել հանձնում-ընդունում:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

ականի հետ ճիշտ է՝